# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի  Մ Ա Ր Զ Պ Ե Տ

---

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«22» հունվարի 2012 թ. N 17

ք. Արմավիր

### *ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, հիմք ընդունելով <<Արմավիրի մարզի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն>> հասարակական կազմակերպության հիմնադիր ժողովի 2010 թվականի ապրիլի 27-ի N 5-Ա որոշումը՝ <<Լավագույնն իր ոլորտում>> ամենամյա մրցույթի և մրցանակաբաշխության <<Տարվա լավագույն համայնք>>, <<Տարվա լավագույն համայնքի ղեկավար>>, <<Տարվա լավագույն մանկավարժ>>, <<Տարվա լավագույն մշակութային-կրթական հաստատություն>>, <<Տարվա լավագույն դպրոց>>, << Տարվա լավագույն նախակրթական հաստատություն>>, <<Բազմազավակ ընտանիք ունեցող մարզի պետական, հասարակական, քաղաքական գործիչ>>, <<Տարվա լավագույն լրատվամիջոց կամ լրագրող>>, <<Տարվա լավագույն ուսանող>>, <<Տարվա լավագույն շինարար>>, <<Տարվա լավագույն համայնքային ծառայող>> և <<Տարվա լավագույն քաղաքացիական ծառայող>> անվանակարգերով մրցույթի առաջին փուլը կազմակերպելու նպատակով.

***կ ա ր գ ա դ ր ու մ  եմ՝***

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի համակարգողին՝ /Փ.Կարապետյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել սույն կարգի կից ձևաչափի պահանջներին համապատասխան, և դրանց լիարժեքությունն ու արդյունավետությունը, հրապարակայնությունն ու թափանցիկությունը ապահովելու նպատակով աշխատանքներին մասնակից դարձնել համայնքների ղեկավարներին, համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայողներին, մարզի հասարակական կազմակերպություններին և զանգվածային լրատվության միջոցներին:
3. Սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել մինչև 2012 թվականի մարտի 24-ը և արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

*ՄԱՐԶՊԵՏ՝* *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*
*2012 թվականի մարտի —ի*
*N-- կարգադրության*

## *ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄ*

*Աշխատանքային խմբի համակարգող՝*

| | |
|---|---|
| Փ.Կարապետյան | -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար |

*Անդամներ՝*

| | |
|---|---|
| Ա.Ղուկասյան | -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ |
| Գ.Հովհաննիսյան | -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության, տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերով բաժնի պետ |
| Հ.Պետրոսյան | -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ |
| Վ.Մկրտչյան | -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ |
| Հ.Հարությունյան | -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ |
| Յու.Մանվելյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ |
| Դ.Դավթյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ |
| Մ.Առուշանյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի |

| | |
|---|---|
| | մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի պետ |
| Գ.Սայադյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ |
| Ա.Թովմասյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության, կրթության բաժնի պետ |
| Ծ.Գրիգորյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ |
| Ս. Խաչատրյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ |
| Կ. Դանիելյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ |
| Հ. Կուրղինյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ |
| Լ. Մուշեղյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ |
| Հ.Վարդանյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ |

***ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***